NPC

# «ԷՆ ՓԻ ՍԻ» ՍՊԸ

ООО "ЭН ПИ СИ"

"NPC" LTD

ՀՀ, Երեւան, Պուշկինի 25, հեռ. 53 27 72, ֆաքս. 53 91 48, www.npc.am, e-mail: adm@npc.am

N 327/12

«10» 01 2012

Հաստատում եմ՝

Կ.Գասպարյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 327/12

Պատվիրատու «ԱՊՄԿ» ՓԲԸ-ի կողմից փորձաքննության է հանձնվել հետևյալ նյութերը՝ փորձաքննության օբյեկտի տեխնիկական տեղեկություններ, հայտ, փորձաքննության պայմանագիր, հաշիվ-ապրանքագիր:

Փորձաքննությունը տվել է հետևյալ արդյունքները.

## *Փորձագիտական եզրակացություն*

Փորձաքննությունը իրականացվել է փաստաթղթային եղանակով:

Փորձաքննության է հանձնվել Գեոնիտ 750 (Ֆորտել Պլյուս 75) /Geonit 750 (Fortel Plus 75)/, դետոնացիոն քուղ ԴՇԱ, ամոնիտ 6 ԺՎ Դ-32 փամփուշտ, ամոնիտ 6 ԺՎ փոշիվացված, կրակատար քուղ ՕՇԱ /Safety fuse/, ոչ էլեկտրական պայթեցման միջոցներ Էքսել հապաղումը 42 մվ, 65 մվ, 450 մվ, 500մվ ապրանքատեսակների տեխնիկական տեղեկություններ, հայտ, փորձաքննության պայմանագիր, հաշիվ-ապրանքագիր:

ՀՀ կառավարության N 1308-Ն 12.11.2009թ. «Հայաստանի Հանրապետության Ռազմական նշանակության արտադրանքի ցանկը, ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման, արտահանման, ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման, այդ արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորման կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» որոշման հավելված 1-ի ռազմական ցուցակում նմանատիպ սարքավորումները բնութագրվում են ՌՆ 4-րդ կետի a ենթակետում.

« ՌՆ 4 *Ռումբեր, տորպեդոներ, հրթիռներ, հեռահար հրթիռներ, այլ պայթուցիչ սարքեր և լիցքեր և հարակից սարքավորումներ և հավելյալ հարմարանքներ, ինչպես նշված է ստորև, և նրանց համար հատուկ նախագծված բաղադրամասեր.*

***a.*** *Ռումբեր, տորպեդոներ, նռնակներ, ծխահարող տուփեր, տարրողություններ (նռնակներ), հրթիռներ, ականներ, ղեկավարվող հրթիռներ, խորքային լիցքեր, կառուցաքանդման լիցքեր, կառուցաքանդման սարքեր, կառուցաքանդման ամբողջական լրակազմեր, «պիրոտեխնիկական» սարքեր, փամփուշտներ և սիմուլյատորներ (այսինքն, սարքավորում, որը նմանակում է վերոհիշյալ ապրանքներից որևէ մեկի հատկանիշները), որոնք հատուկ նախատեսված են ռազմական օգտագործման համար* » :

Համաձայն ՀՀ կառավարության N 1308-Ն 12.11.2009թ. որոշման՝ ապրանքը ռազմական նշանակություն ունի այն դեպքում, երբ դրա տեխնիկական տվյալները համապատասխանում են ցանկի, ռազմական ցուցակում նշված տվյալներին, տվյալ դեպքում վերնշված սարքավորումները իրենց տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում է ՌՆ 4-րդ կետի a ենթակետի նկարագրին:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆ

Գեոնիտ 750 (Ֆորտել Պլյուս-75) /Geonit 750 (Fortel Plus 75)/, դետոնացիոն քուղ ԴՇԱ-ամոնիտ 6 ԺՎ Դ-32 փամփուշտ, ամոնիտ 6 ԺՎ փոշիացված, կրակատար քուղ ՕՇԱ /Safety fuse/, ոչ էլեկտրական պայթեցման միջոցներ Էքսել հապաղումը 42 մվ, 65 մվ, 450 մվ, 500մվ ապրանքատեսակները ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՉԵՆ:

« Էն Փի Սի » ՍՊԸ փորձագետ Ա.Զաքարյան

Վկայագիր N AST-001.Q-0032-2009